

5.8. 2006թ. ապրիլ ամսվա հիդրոտեղեկությունների պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ապրիլին հանրապետությունում օդի միջին ամսական ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 0.5-2.0 աստիճանով:

Առաջին տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-3, երկրորդ տասնօրյակում՝ 3-5 (ք.Աշտարակում /Արագածոտնի մարզ/ 6) աստիճանով, երրորդ տասնօրյակում այն ցածր է եղել նորմայից 2-4 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում կազմել է +18 +21°C, Տավուշում և Սյունիքի նախալեռներում՝ +15 +16°C, Լոռիում՝ +12 +15°C, լեռնային շրջաններում՝ +9 +13°C:

Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի երկրորդ տասնօրյակում՝ 10-16-ին, երբ Սյունիքի հովիտներում գրանցվել է +27 +30°C (ք.Կապանում՝ +31°C), Արարատյան դաշտում՝ +26 +28°C (ապրիլի 11-ին՝ ք.Արտաշատում /Արարատի մարզ/ +29°C), Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ +22 +26°C, Լոռիում՝ +20 +24°C, լեռնային շրջաններում՝ +17 +22°C: Ապրիլի 11-ին գրանցված առավելագույն ջերմաստիճանը (ք.Արտաշատում՝ +29°C, Երևանում՝ +28°C և ք.Կապանում՝ +31°C) գերազանցել է այս վայրերում երբևէ գրանցված տվյալ օրվա բացարձակ առավելագույն ջերմաստիճանը:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է +1 +3°C, Աշոցք գյուղում (Շիրակի մարզ)՝ -1°C, Լոռիում՝ +2 +4°C, Սյունիքի նախալեռներում՝ +3 +5°C, Տավուշում՝ +4 +8°C, Արարատյան դաշտում՝ +7 +9°C, Սյունիքի հովիտներում՝ +8 +10°C:

Ամսվա ամենացածր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի երրորդ տասնօրյակի վերջում՝ 27-29-ին, երբ լեռնային շրջաններում գրանցվել է -2-11°C, Աշոցք գյուղում՝ -12°C, ապրիլի 26-ին Լոռիում՝ -6 -8°C, Տավուշում՝ 0 -4°C, Սյունիքի նախալեռներում՝ 0 -1°C, Արարատյան դաշտում՝ 0 +2°C, Սյունիքի հովիտներում՝ +3 +5°C:

Ամսական տեղումների քանակը հանրապետության տարածքի մեծ մասում բարձր է եղել նորմայից: Արարատյան դաշտում այն կազմել է նորմայի 200-260%-ը (ք.Արտաշատում՝ 330%), Լոռիում, Կոտայքում և Շիրակում՝ 190-225%, Գեղարքունիքում՝ 150-250%, Տավուշում, Արագածոտնում՝ 200% (ք.Թալինում՝ 140%), Վայոց ձորում՝ 165%, Սյունիքում՝ 50-85%-ը (ք.Մեղրիում՝ 150%, ք.Սիսիանում՝ 140%):

Առանց տեղումների եղանակ դիտվել է ապրիլի 1-2-ին, 7-10-ին, 13-ին և 15-ին: Մնացած օրերին դիտվել են տեղումներ և ամպրոպ: Առանձին օրերին որոշ լեռնային շրջաններում և Լոռիում (Աշոցք, Տաշիր, Վանաձոր, Ստեփանավան) տեղումները դիտվել են ձյան տեսքով:

Ապրիլի 27-30-ին Լոռիում, Կոտայքում, Շիրակում, Գեղարքունիքում և Սյունիքի նախալեռներում առաջացել է ժամանակավոր ձյան ծածկ՝ 2-7 սմ բարձրությամբ:

Կայուն ձյան ծածկը պահպանվել է 2500 մետրից բարձր շրջաններում և կազմել 271 սմ (բացառությամբ Արագած գյուղի /Արագածոտնի մարզ/ 3229 մ):

Ապրիլի 4-ին ք.Սևանում (Գեղարքունիքի մարզ), 9-ին՝ ք.Վանաձորում (Լոռու մարզ), 14-ին՝ ք.Իջևանում (Տավուշի մարզ), 30-ին՝ Աշոցք գյուղում դիտվել է քամի 12-16 մ/վրկ արագությամբ, պոռթկումները՝ 17-20 մ/վրկ:

Ապրիլի 10-ին՝ ք.Տաշիրում (Լոռու մարզ), 21-ին՝ ք.Սիսիանում (Սյունիքի մարզ), 22-ին՝ ք.Ջերմուկում (Վայոց ձորի մարզ) և 30-ին՝ ք.Սիսիանում դիտվել է կարկուտ:

Ապրիլի 17-ին ք.Դիլիջանում (Տավուշի մարզ), 21-ին՝ Ֆանտան գյուղում (Կոտայքի մարզ), 25-ին՝ ք.Իջևանում և 30-ին՝ Պուշկինի լեռնանցքում (Լոռու մարզ) դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ մինչև 50 մ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 130-160%:

Սևանա լճի մակարդակը բարձրացել է 23 սմ-ով և 2006թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել 1898.4 մ, որը 2005թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 43 սմ-ով: